

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԱՐԼԵՍՏ ԵՎ ԿՑԱՆՔ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԼԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հունվարի 25-ին Երևանի Նկարիչների տանը բացվեց կիրառական արվեստի ինքնագործ խմբակների և առանձին սիրող նկարիչների գործերի ցուցահանդեսը՝ Ցուցահանդեսին մասնակցում են ավելի քան 100 ինքնուստեղծագործողներ՝ ռեսպուբլիկայի տարբեր բազմաթիվ և գյուղերից։ Ցուցադրված նյութերի թիվը հասնում է 300-ի։ Այստեղ ներկայացված են քանդակագործության, փորագրության, փայտագրության, ձեռագործի, գորգագործության, յուղանկարչության, գրաֆիկայի լավագույն օրինակները։

Ցուցահանդեսում այցելողների ուշադրություն են գրավում տնտեսագետ Հակոբ Ազատյանի երկու սափորները (ծիրանի փայտից), գորգագործ Միսակ Աբելյանի «Աղբյուրի մոտ» և «Հանուն խաղաղության» գործերը։

Ուշագրավ են բրնձի հատիկի վրա 136 տառով գրված սղջունի խոսքերը չին ժողովրդին, Սովետական Ադրբեջանի 30-ամյակին նվիրված պողպատաձուլ նկարադարձ ծաղկամանը և այլ հիանալի նկարներ, քանդակագործություններ ու փորագրություններ։

Ցուցահանդեսին ներկայացված աշխատանքները վկայում են մեր ժողովրդի ստեղծագործ ուժի և նրա անսպառ հնարավորությունների մասին։

Ցուցահանդեսի լավագույն գործերը կներկայացվեն Մոսկվայում կազմակերպվելիք ժողովրդական ստեղծագործության ցուցահանդեսին։

ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության բաժանմունքը նախաձեռնել է հայ երաժշտական մշակույթի խոշորագույն գործիչ Կոմիտասի ընտիր երկերի հինգ հատորանոց ակադեմիական հրատարակությանը։ Տպագրության համար արդեն պատրաստ են առաջին և երկրորդ հատորները։ Առաջին հատորում զետեղված են մեներգերը, իսկ երկրորդում՝ խմբերգերը։ Բաժանմունքում խնամքով պահպանվում է Կոմիտասի ստեղծագործա-

կան ժառանգությունը։ Անցած տարում կոմպոզիտորի արխիվը հարստացել է ժողովրդական երգերի այն ձեռագրերով, որ հավաքել է Կոմիտասը Հայաստանի բազմաթիվ գավառներում։ Դիվանում պահպանվում են մի շարք չհրատարակված երաժշտական ստեղծագործություններ, որոնք կզետեղվեն երկերի մյուս հատորներում։ Երգերի խոսքերը կտրվեն հայերեն և ռուսերեն։

ԲԱՆԱՍՏԵՂՇ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ.— Հունվարի 19-ին Երևանում Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ բանաստեղծ Հովհաննես Շիրազի գրական երեկոն։

Բանաստեղծի ստեղծագործության մասին զեկուցեց գրող Ն. Զարյանը։ Նա հատկապես նշեց Մեր գյուղերի անունները և «Իմ ընկեր Լորիկը» բանաստեղծությունների զաղափարական-զեղարվեստական արժանիքները։

Գեղարվեստական բաժնում Շիրազի բանաստեղծությունների և քերթվածների արտասանությամբ հանդես եկան ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ-հիներ Ռ. Վարդանյանը, Ա. Ասրյանը, ասմունքի վարպետ Հ. Գարագաշը։

Վերջում շնորհակալական խոսք ասաց և մի շարք բանաստեղծություններ արտասանեց հեղինակը, որին դահլիճը դիմավորեց ջերմորեն։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԵԹՏԻԼԿԱԳՈՐԾՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՑԻՏՈՒՆԸ.— Հետաքրքիր և բովանդակային է Լենինականի Տեքստիլ կոմբինատի կուլտուրայի տան առօրյան։ Կոմբինատի շատ բանվորներ իրենց երեկոն մեծ մասամբ անց են կացնում այնտեղ։ Կուլտուրայի տանը գործում են երգի-պարի, շախմատի, կարոձևի, դրական և այլ ինքնագործ խմբակներ։ Թատերական խմբակը հաճախ պիեսներ է ներկայացնում տեքստիլագործների և Ախուրյանի ու Արթիկի շրջանների կուլտեստականների համար։ Զգալի չափով ավելացել է կուլտուրայի տան գրադարանի գրքային պահեստը և ընթերցողների թիվը։ Գրադարանն ունի բազմաթիվ բաժանորդներ։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՈՆԵՏԳԵՆՈԼՈԳԻԱՑԻ ԵՎ ՕՆԿՈԼՈԳԻԱՑԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ.— Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության Ռենտգենոլոգիայի և ռենտգենայի (խոցերի և շարժակ ուռուցքների ուսումնասիրության) ինստիտուտը մեծ օգնություն է ցույց տալիս գյուղական բժշկներին։ Բժշկության նորագույն նվաճումներին նրանց ծանոթացնելու նպատակով վերջին երեք ամսվա ընթացքում ինստիտուտը գիտական նիստեր է անցկացրել Ախտայի,

Աշտարակի, Նոր Բայազետի և ռեսպուբլիկայի մի շարք այլ շրջաններում։

Չարորակ ուռուցքների կլինիկական և ռենտգենոլոգիական վաղաժամ ախտաճանաչման, կանխարգելման և բուժման հարցերին նվիրված հերթական երկօրյա նիստը ինստիտուտն անցկացրեց Երևանի Ստալինյան ռայոնում։ Նիստին մասնակցեցին 250 դիտական աշխատողներ, բուժաշխատողներ և արդյունաբերական զանազան ձեռնարկությունների ներկայացուցիչներ։

Քննարկվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Քիմիկոս-անդամ պրոֆ. Բ. Ֆանաբեյանի «Ստամբուլի քաղցկեղի կլինիկական և ռենտգենոլոգիական վաղաժամ դիագնոստիկան», ավագ դիտական աշխատող Ս. Հովհաննիսյանի «Կրծքի վանդակի օրգանների շարորակ ուռուցքների կլինիկական և ռենտգենոլոգիական վաղաժամ դիագնոստիկան» դեկուցումները:

Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովի ուսմունքի լույսի տակ էքսպերիմենտալ օնկոլոգիայի (խոցերի և շարորակ հիվանդությունների բուժման) նվաճումների մասին պատմեց քիոլոգիական գիտությունների թեկնածու Մ. Մովսիսյանը:

Հնթացիկ տարում ինստիտուտը գիտական նիստեր կանցկացրեց ռեսպուբլիկայի հեռավոր տալլը շրջաններում:

Բժիշկներ ԿԱՏԱՐՆԻԱԳՈՐԾՈՒՄ.— Որակավորման բարձրացման հնգամսյա դասընթացներում սովորելու համար Մոսկվա և Լենինգրադ մեկնեցին Հայաստանի մի խումբ բժիշկներ և նրանցից շատերը գյուղական և շրջանային բուժհիմնարկների աշխատողներ են:

Անցած տարի երկրի կենտրոնական քաղաքներում և Երևանի կլինիկաներում կատարելագործվել ու խրենց մասնագիտությունը խորացրել են մոտ 200 բժիշկներ:

Այս տարի կատարելագործվեն 400 բժիշկներ: Միայն Մոսկվա և Լենինգրադ կմեկնեն մոտ 200 բժիշկներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՑԻՆ ՋՐԵՐԸ.— Սովետական Միությունում լայն համարվ են ստացել Հայաստանի հանքային ջրերը: Հանքային ջրերի՝ Ջերմուկի, Արդնիի և Դիլիջանի գործարաններն անցյալ տարվա պլանը կատարեցին 109,8 տոկոսով, երկրին տալով 14.826.000 շիշ հանքային ջուր: Անցած տարի ավելի քան 13.000.000 շիշ հանքային ջուր է ուղարկվել Սովետական Միության խոշոր քաղաքները և մեծ կառուցումների վայրերը:

Ներկայումս գործարաններում մեծ աշխատանք է ծավալվել արտադրական միջոցները մեքենայացնելու ուղղությամբ: Ջերմուկի աղբյուրների վայրում կառուցվում է նոր գործարան, որը տարեկան արտադրելու է 10.000.000 շիշ հանքային ջուր:

Այս տարի Հայաստանի գործարանները երկրին կտան 20.500.000 շիշ հանքային ջուր:

ՆՈՐ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ.— Նորաշենիկ գյուղում բացվեց նոր հիվանդանոց, որն ունի մանկաբարձական ու թերապևտիկ (ներքին հիվանդությունների) բաժիններ, օպահովված անհրաժեշտ սարքավորումներով:

Հիվանդանոցն սպասարկում է Առաջածոր, Խոտանան, Օխտար, Անտառաշատ, Տանձավետ գյուղերի աշխատավորները:

ԲԺՇԿԱԿԱՆ, ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՔԻՈՎ.— Բուժսպասարկման ինքնաթիռային ջոկատի հերթապահի սենյակում հնչում է միջբաղաքային հեռախոսային դաժգը:

— Բասարգեշարից է,— լսվում է երիտասարդ վիրաբուժի փոքր ինչ հուզված ձայնը.— բարդ վիրահատության համար խնդրում եմ փորձված կոնսուլտանտ (խորհրդատու) ուղարկեք...

— Անմիջապես...

Շտապ կերպով օդանավակայան է մեկնում ռեսպուբլիկայի լավագույն վիրաբույժներից մեկը՝ պրոֆ. Բր. Պետրոսյանը:

Օգալուն գործի է դրում մոտորը, և բիշ անց ինքնաթիռը թռի մեկնում պոկվում է գետնից: Չանցած մեկ ժամ, պրոֆեսորը գյուղական հիվանդանոցում է: Պրոֆեսորի և գյուղական բժշկի համատեղ կատարած բարդ վիրահատման շնորհիվ հիվանդի կյանքը փրկված է:

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության բուժսպասարկման ինքնաթիռային ջոկատը բժշկական մասնագիտական օգնություն է ցույց տալիս ռեսպուբլիկայի հեռավոր շրջանների գյուղական հիվանդանոցներին:

Գյուղական բժիշկներին մեթոդական ցուցումներ տալու նպատակով անցած մի քանի ամսում բուժսպասարկման ինքնաթիռային ջոկատի ինքնաթիռներով ռեսպուբլիկայի շրջաններն են մեկնել ավելի քան 50 պրոֆեսոր, դոցենտ, գիտական աշխատող:

Բուժսպասարկման սավառնողությունը մեծ դեր է կատարում նաև պահանջված պրեպարատները շտապ տեղ հասցնելու և ծանր հիվանդներին Երևան տեղափոխելու գործում:

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՌՈՂՋԱՐԱՆԸ ՉՄՌԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒՄ.— Չլան սպիտակ փաթիլներն օգուտ օրորվելով, հանդարտ իջնում են փողոցների, շենքերի և քաղաքը երկղող անտառների վրա... ամենուրեք խոտաշունչ ձմեռ է:

Անտառապատ լեռան ստորոտում, Կիրովական քաղաքի մոտ տեղավորված «Հայաստան» առողջարանը այս օրերին չի ընդհատել իր գործունեությունը: Բազմաթիվ բանվորներ, ծառայողներ, կուլտետեսականներ նոր տարվա առաջին օրերից եկել են այստեղ բուժվելու և կազդուրվելու:

Բուժվողների համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ: Առողջարանում ներկայումս գործում են ռադիոյի լողարաններ, ջրաբուժարան, ցիկաբուժարան, ռենտգենյան, ֆիզիո-թերապևտիկ, ֆունկցիոնալ դիախնոստիկայի և բուժական ֆիզկուլտուրայի կաբինետներ:

Ձմռան ամիսներին առողջարանում կբուժվեն մի քանի հարյուր աշխատավորներ:

ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆՎԻՐՎԱՄ ԴԱՍ-ԸՆԹԱՑՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Լուսավորության մի-նիստրության ուսուցիչների կատարելագործման ինս-տիտուտը նրանում կազմակերպել է պոլիտեխնիկա-կան ուսուցման հարցերին նվիրված կարճատև դաս-ընթացներ, որոնց մասնակցում են նրանք օկրուգի (վարչական բաժանմունքի) միջնակարգ դպրոցների տնօրենները։ Նրանք դասախոսություններ են լսում «Պոլիտեխնիկական կրթության գիտական սկզբունք-ները», «Ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիաբանու-թյան, բնագիտության և գծագրության դասավանդու-մը պոլիտեխնիկական կրթության հիմունքներում» և այլ նյութերի շուրջը։

Դասընթացներում դասավանդում են պրոֆեսորներ, դոկտորներ, դոցենտներ, գիտության թեկնածուներ և անվանի մանկավարժներ։

ՀԵՌԱԿԱ ՖԱԿՈՒԼՏԵՏ ՆՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.— ՍՍՌՄ բարձրագույն կրթության մինիստրի հրամանով 1953—1954 ուսումնական տար-վանից նրանի Պոլիտեխնիկական ինստիտուտում բացվում է հեռակա ուսուցման ֆակուլտետ։ Ֆակուլ-տետը պատրաստելու է էլեկտրիկ-ինժեներներ, քիմի-կոսներ, մեխանիկներ և կառուցող ինժեներներ։ Դա-սախոսությունները կկարգացվեն ձեռնարկություննե-րում, իսկ լաբորատոր պարապմունքները տեղի կու-նենան ինստիտուտում։ Հեռակա ուսուցման ֆակուլ-տետում ուսման տևողությունն է 6 տարի։

Առաջին կուրսերում ընդունվելու է 250 մարդ։ Ու-սանողներ են ընդունվելու նաև բարձր կուրսերի հա-մար։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ.— Նոր տարվա սկզբին նրանի դպրոցական պիտույքների գործարանում շա-հագործման հանձնվեց շենքի երկհարկանի մի նոր բաժանմունքը։ Այնտեղ տեղավորվեցին տպագրական, գրաշարական, ցինկոգրաֆիայի և տուփերի պատ-

րասման բաժանմունքները։ Զգալիորեն ընդլայնվել է աշակերտական տետրերի արտագրության բաժան-մունքը, որը ձեռնարկության աշխատողներին հնա-րավորություն կտա արտագրելու մոտ 10.000.000 տետր ավելի, քան 1952 թվականին։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ ԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴԻ ՍԿԻՋ-ԲԸ.— Հունվարի 11-ին ռեսպուբլիկայում ավարտվեց դպրոցականների և արհեստագործական ուսումնա-րանների սաների ձմեռային արձակուրդը։

Աշխույժ ու բովանդակային էր կազմակերպված դպրոցականների հանգիստը։ Արձակուրդի ընթացքում հազարավոր աշակերտներ դիտեցին ներկայացումներ, այցելեցին թանգարաններ, նորակառույցներ, գործա-րաններ, կոլտնտեսություններ, պատմական վայրեր։ Շրջաններից բազմաթիվ դպրոցականներ եղան նրեա-նում, լենինականում, Կիրովականում և ծանոթացան այդ քաղաքների նորակառույցներին։

Ռեսպուբլիկայի բոլոր քաղաքներում ու շրջաննե-րում տեղի ունեցան նոր տարվա տոնածառի հան-դեսներ, որտեղ դպրոցականները լայնորեն ցուցադրե-ցին իրենց ինքնագործունեությունը։ Հանդիպումներ ունեցան գիտության, արվեստի և արտագրության անվանի մարդկանց հետ։

Նրանում տեղի ունեցան դպրոցականների 1953 թվականի շախմատային ռեսպուբլիկական չեմպիո-նատ, պատանի մարմնամարզիկների համաքաղաքա-յին մրցումներ։

Առաջավոր փորձի փոխանակման նպատակով կազ-մակերպվեցին դպրոցականների ինքնագործունեու-թյան ցուցահանդեսներ, գեղարվեստական խմբերի ստուգատեսներ։

Ռեսպուբլիկայի մասսայական, բանվորական երի-տասարդության և գյուղական երիտասարդության դպրոցներում և արհեստագործական ուսումնարաննե-րում սկսվեց 1952—1953 ուսումնական տարվա եր-րորդ քառորդը։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՆՐԵՎԱՆԻ ՄԻԿՈՑԱՆԻ ՌԱՅՈՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Կառուցվում և գնալով ավելի է բարեկարգվում նրանի Միկոյանի անվան ռայոնը։ Այստեղ բաց-վում են նոր, լայն փողոցներ, որոնց եզրերին մեկը մյուսի հետևից բարձրանում են նորակառույց բնա-կելի տներ, կուլտուր-լուսավորական ու հասարակա-կան հաստատությունների, արդյունաբերական ձեռ-նարկությունների շենքեր։

Անցյալ տարի ռայոնի դպրոցականները նվեր ստա-ցան երկու միջնակարգ դպրոցների նոր շենքեր։ Հիմ-նարկ-ձեռնարկությունները և անհատ կառուցողները շահագործման հանձնեցին 22.000 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Զգալի աշխատանք կատար-վեց փողոցների բարեկարգման, ջրմուղի և էլեկտրա-կան ցանցերի ընդարձակման ուղղությամբ։

Ձորա քառակուսի կիլոմետր տարածության վրա ստեղծվեցին նոր պուրակներ, բարեկարգվեց Հաղ-

թանակի անվան կուլտուրայի ու հանգստի վրոսայ-գին, նոր տարվա նախօրյակին ավարտվեց գլխավոր կուլուրու խոշոր գծի անցկացումը, մանկապարտեզնե-րի երեք շենքերի կառուցումը։

Շինարարական ու բարեկարգման մեծ աշխատանք-ներ են նախատեսված 1953 թվականին։ Կառուցվելու են արտագրական մի շարք նոր ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների շենքեր, ավարտ-վելու է Կոմիտասի անվան փողոցի կառուցումը, շա-հագործման է հանձնվելու տրամվայի նոր գիծը։

ՆՐԵՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ.— Ձմեռ է... սակայն հատակ ամառային ցուցանիշներով են աշ-խատում նրանի կառույցների աշխատողները։

Ահա մայրաքաղաքի կենտրոնը՝ Լենինի հրապա-րակը։ Նոր տարվա առաջին շաբաթում համարյա ա-վարտվեցին այստեղ կառուցվող հյուրանոցի և ՀԱՄՆ-ի

(Հայաստանի արհեստակցական միութիւնների խորհրդի) շենքերի գետնահարկերի առանձին հատվածների երկաթ-բետոնային աշխատանքները Միաժամանակ կատարվում են հողային, կաղապարման, պատերը շարելու աշխատանքներ, տաշվում են ձևավոր քարեր՝ շենքերի ճակատները երեսպատելու համար։

Երևարարական մեխանիզմների աղմուկը չի լուծու երևան կայարանի նորակառուցումը։ Արդեն ձեռնարկվել է հասցված կայարանի շենքի աջ թևը, որն ունենալու է մերձքաղաքային գնացքների ուղեորների սրահ և օժանդակ սենյակներ։ Ութ մետր բարձրության է հասել շենքի առջևի սյունաշարը։ Արագորին վեր է խոյանում կենտրոնական ճակատը։

Հաջողությամբ է ընթանում պարտիայի Նրևանի փողոցային կոմիտեի շենքի շինարարությունը։

Բժշկական ինստիտուտի մոտ սկսվել է Գետառի նոր կամուրջի կառուցումը։ Նալբանդյանի փողոցում, Լենինի և Աղիզբեկովի հրապարակների միջև կատարվում են ընակելի երկու նոր տների կառուցման հողային աշխատանքները։

ՆՈՐ ԱՎԱՆՆԵՐ.— Թալինի շրջանի Արաքս, Մաստարա, Կարմրաշեն, Արտենի, Արագած նոր ավաններում կառուցվել են քարաշեն բազմաթիվ շենքեր։ Նրանց շարքում հատկապես աչքի են ընկնում դպրոցը, ախումբը, բուժարանը, հյուրանոցը։

Երկու տարի առաջ այստեղ ամայի էր։ Կառավարությունը վերաբնակիչներին տալիս է բոլոր հնարավորությունները նոր բնակավայրում տնտեսությունն արագորեն զարգացնելու համար։

Ռեսպուբլիկայում երկու տարվա ընթացքում բարձր լեռնային գյուղերից եկող վերաբնակիչների համար հիմնվել է ինը հատ ավան, որոնցից չորսը Արարատյան դաշտավայրում։

Մինչև նոր հնգամյակի վերջը լիովին կավարտվի ավանների շինարարությունն ու վերաբնակեցումը։ Ավանների շնորհիվ կյուրացվեն տասնյակ հազար հեկտար տարածությամբ նոր հողեր։

ԳՅՈՒՂՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԻԿԻԱՅՈՒՄԸ.— Ռեսպուբլիկայում մեծ աշխատանքներ են կատարվում գյուղերի

էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Էներգետիկները այն են կացնում էլեկտրահաղորդման գծեր, կառուցում են տրանսֆորմատորային ենթակայաններ, էլեկտրիֆիկացնում են գյուղերը։ Նոր տարվա առաջին ամսում էլեկտրական լույս ստացան Ապարանի և Զանգիթասարի շրջանների մի քանի գյուղեր։

Հայկական գյուղական էլեկտրականության շինարարական-մոնտաժային միավորումը ներկայումս էլեկտրիֆիկացման աշխատանքներ է կատարում Հայաստանի շատ շրջաններում։

Այս տարի էլեկտրիֆիկացվելու է կոլտնտեսային 40 գյուղ։ Էլեկտրական հոսանք կստանան նաև 11 մեքենատրակտորային կայաններ։ Համատարած կ'էլեկտրիֆիկացվեն Բերիայի, Զանգիթասարի, Կոտայքի, Ծամազիի և Էջմիածնի շրջանները։

Ծամազիի շրջանում կավարտվի Մազկավանի, Կալինինոյում՝ Մարատովկայի, Հոկտեմբերյանում՝ Հայկավանի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը։ Կսկսվի Վարդենիկի (Մարտունի), Կույրիշևի (Իջևան) և Զիլանի (Ղուկասյան) էլեկտրակայանների կառուցումը։

Տարվա ընթացքում անցկացվելու են մոտ 300 կիլոմետր էլեկտրահաղորդման գծեր։

Գյուղական վայրերում կանցկացվեն 4.300 լուսավորման կետեր։

ԱՆՅՈՒՄԻՆ ԱՄԱՆԵՂՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.— Նրևանի մետաղա լայն սպառման առարկաների գործարանը ամեն տարի մեր երկրի աշխատավորությանը մեծ քանակությամբ տնային գործածության իրեր է տալիս։

Անցյալ տարվա համեմատությամբ, այս տարի գործարանի արտադրանքն ավելանալու է 35 տոկոսով։ Գործարանի աշխատողները ավարտել են ալյումինե ամանեղենի արտադրության բաժանմունքի սարքավորման աշխատանքը։ Տեղագրվել են կաղապարող և այլ հաստոցներ, ստեղծվել են հարմարանքներ արտադրանքի որակը և տեսակները բարձրացնելու համար։ Նոր բաժանմունքը տարեկան արտադրելու է 1,5—2 միլիոն սուլյու ալյումինե ամանեղեն։

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ԿՆՑԱՂ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆՔԵՐ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.— Ամեն տարի ռեսպուբլիկայի կոլտնտեսություններն իրենց անբաժանելի դրամագլխից հսկայական միջոցներ են հատկացնում արտելային տնտեսության հետագա զարգացման և ամրապնդման համար։

1952 թվականին նրանք ավելի քան 107.000.000 ուրլի են ծախսել շինարարության, ոռոգման ցանցը վերակառուցելու, աշխատատար միջոցներ էլեկտրիֆիկացնելու և այլ կարիքների վրա։

Անցյալ տարի ռեսպուբլիկայի գյուղատնտեսական արտելները կառուցել են ավելի քան 1.500 արտադրական զանազան շենքեր։

Այս տարի մեծ շինարարություն է ծավալվելու գյուղերում։ Կոլտնտեսությունները արտադրական շենքեր կառուցելու համար երեք անգամ ավելի շատ գումար են ներդնելու, քան անցյալ տարի։

ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ՕԳՆՈՒՄ Է ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ.— Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Անասնապահական գիտահետազոտական ինստիտուտը գործնական օգնություն է ցույց տալիս ռեսպուբլիկայի կոլտնտեսություններին։

Ինստիտուտի գյուղատնտեսական անասունների կերակրման բաժանմունքը գիտությունների թեկնածու Կ. Զաքարյանի ղեկավարությամբ մշակել է ծղոտը և այլ կերերը հարստացնելու նոր մեթոդ, որն անցյալ տարի արմատավորվել է ռեսպուբլիկայի 65 կոլտնտեսություններում։ Այդ մեթոդի կիրառմամբ լուրջ օրանջուր կովի կաթնատվությունը ամսական ավելանում է 40—60 կիլոգրամով, 20—30 տոկոսով աճում է մատղաշների քաշը։ Այն նպաստում է նաև կովերի ստերիլության վերացմանը։

Ինստիտուտը անցյալ տարի գիտական հետազոտություններ կատարեց մեղվաբուծության զարգացման ուղղությամբ: Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Կոթոլյանը ստեղծել է նոր տեսակի բարակ մոմաթերթ, որը կրկնակի չափով տնտեսում է մեղրամոմը: Այն արդեն օգտագործվել է մեղվաբուծական երեք տնտեսությունում և տվել փայլուն արդյունք:

Գիտության նվաճումները կուտնտեսություններին հաղորդելու, այն արտադրության մեջ ներդնելու նպատակով, ինստիտուտի աշխատողները անցյալ տարի եղել են Ստեփանավանի, Նոր Բայազետի, Սեանի, Բերիայի և այլ շրջաններում:

Ինստիտուտը հրատարակել է անասնապահության հարցերին նվիրված աշխատություններ և գիտահանրամատչելի գրքուկներ:

Գիտական լայն շահանքի հետազոտություններ է կատարելու ինստիտուտը նաև այս տարի Նոր Բայազետի, Ապարանի և այլ շրջանների կուտնտեսությունների ու անասնապահական ագարակների աշխատողներին ինստիտուտը օգնելու է ոչխարաբուծության, խոզաբուծության, թռչնաբուծության զարգացման, անասունների մթերատվության բարձրացման և այլ բնագավառներում:

ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՆՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՃԸ.— Հանրային դաշտերից ստացվող առատ եկամուտների շնորհիվ ռեսպուբլիկայի կուտնտեսային գյուղերում տարեցտարի ծավալվում է արտադրական, հասարակական և բնակարանային շինարարությունը, աշխատատար միջոցների մեքենայացումը, աճում է աշխատավորների գնողունակությունը:

Այդ մասին է վկայում ապրանքաշրջանառության աննախընթաց վերելքը գյուղում: Անցյալ տարի միայն հայկական կոոպերատիվ խանութներից կուտնտեսականները գնել են մի քանի հարյուր միլիոն ուրլու արդյունաբերական զանազան ապրանքներ:

Կուտնտեսային գյուղի նորակառույցների համար վաճառվել է 30.000.000 ուրլու շինանյութ՝ փայտեղեն, ցեմենտ, կիր, երկաթեղեն, ապակի: Աշխատավորները ներկայացնում են հատկապես կուտուրական սպասարկման ու լայն սպառման առարկաների մեծ պահանջ: Վերջին մեկ տարվա ընթացքում նրանք գնել են բազմաթիվ ավտոմեքենաներ, ռադիո-ընդունիչներ ու կարի մեքենաներ, ժամացույցներ, մոտոցիկլետներ ու հեծանիվներ, դաշնամուրներ, 105.000.000 ուրլու բրդյա, մետաքսյա, բամբակյա զործվածքեղեն, 50.000.000 ուրլու պատրաստի հագուստեղեն ու տրիկոտաժեղեն, 8.000.000 ուրլու կահույք, 2.500.000 ուրլու գրականություն և այլն:

Այս տարի Հայկոոպի ցանցի գյուղական խանութներում կվաճառվի մոտ 10 տոկոսով ավելի շատ ապրանք, քան 1952 թվականին:

